

դեռ Ս. Սահակայ ընծայուած խօսքերուն մէջ անհաւանութեան որ եւ է նշան չըկայ: Արդ՝ մեք ահա Ե դարուն իսկ կը տեսնենք լուծման մասին կարծեաց անհամաձայնութիւն մը, որ անընդհատ կը շարունակէ այնուհետեւ եւս: Արշարունին է դարուն կը հաստատէ դեռ լուծման տեւողութիւնը, — թէեւ ինք չի հաւանիր (ԺԲ), — եօթնեկին մէջ պահոց «հինգ» օր հաշուելով (ԺԳ, ԺԵ, ԻԹ), եւ քառասնորդաց թիւը լրացնելով առաջաւորաց եւ աւագ շաբաթու օրերով (ԼԱ): Նոյն դարու վերջերը Տրուզեան ժողովը կը դատապարտէր՝ «Հայոց աշխարհին մէջ եւ ուրիշ տեղեր» նոյն երկու օրեր «ոմանց ձու եւ պակիր ճաշակելը» (կան. ԾԶ). դատապարտութիւն՝ զոր չեմ կարող հաշտեցնել Յունաց համանման սովորութեան հետ, բայց եթէ ենթադրելով՝ որ իրենք ալ անմիաբան էին իրենց մէջ:

Օձնեցւոյն օրով կը հանդիպինք դեռ նոյն ներհակ սովորութեանց, որոց նկատմամբ հայրապետս անխտիր է բոլորովին, ըսելով. «Երկոքին ընդունելի են առաջի Աստուծոյ եւ յաւանդութեան եկեղեցւոյ Քրիստոսի» (25): Ընդ հակառակն անոր ժամանակակիցը Խոսրովիկ կը պայքարի լուծողաց դէմ, գայն արդիւնք համարելով